Հաստատված է
Հայաստանի Հանրապետություն
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2021թ. նոյեմբերի 29-ի N 02-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2022 ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, կայք՝ http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48, էլ. փոստ՝ info@ecoinspect.gov.am

հ/հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԷՋ
	Ներածություն	2-3
1.	Տարեկան գործունեության ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները	4-5
2.	Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը	6-7
3.	Հայտնաբերված առավել ռիսկային ուղղությունները և առկա հիմնախնդիրների բացահայտումը	8-12
4.	Տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը	13-14
5.	Տեսչական մարմնի 2022 թվականի միջոցառումների ժամանակացույց	15-20
6.	Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագիրը	21-23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ մասով և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերակազմավորվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի: ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) կանոնադրությունը:

Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝

1) բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

2) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ Տեսչական մարմնի համար սահմանվել է թվով 195 հաստիք, որից 28-ը՝ թափուր:

Տեսչական մարմնի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն.

2) Ընդերքի վերահսկողության վարչություն.

3) Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն.

4) Որակի ապահովման վարչություն.

5) Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն.

6) Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն.

7) Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին.

8) Լաբորատոր հետազոտությունների բաժին:

Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումներն են՝

1) Երևանի տարածքային բաժին.

2) Արագածոտնի տարածքային բաժին.

3) Արարատի տարածքային բաժին.

4) Արմավիրի տարածքային բաժին.

5) Գեղարքունիքի տարածքային բաժին.

6) Լոռու տարածքային բաժին.

7) Կոտայքի տարածքային բաժին.

8) Շիրակի տարածքային բաժին.

9) Սյունիքի տարածքային բաժին.

10) Վայոց ձորի տարածքային բաժին.

11) Տավուշի տարածքային բաժին:

Տեսչական մարմնի լիազորությունների իրականացման նպատակով 2022 թվականի կտրվածքով պլանավորվել է իրականացնել 933,932,549 ՀՀ դրամի բյուջետային հատկացում, որից միայն աշխատանքի վարձատրություն՝ 768, 422,111 ՀՀ դրամ:

Տեսչական մարմնի իր լիազորությունների շրջանակներում վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է կադրային, նյութատեխնիկական (համակարգչային տեխնիկա և լաբորատոր սարքավորումներ) և մասնագիտական ներուժի հագեցվածության ապահովում: Անհրաժեշտ է համալրել թափուր հաստիքները, ինչպես նաև ապահովել մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործում, ինչպես նաև տեսուչների վարքագծի սահմանում:

Տեսչական մարմնի կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և լավագույն փորձի փոխանակման շրջանակներում իրականացրել և շարունակվելու են հետևյալ աշխատանքները.

- «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական մոնիտորինգի կազմակերպման աշխատանքների իրականացում:
- Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) հետ ձեռք բերված պայմանավորվածություն համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1640-Ա որոշմամբ Տեսչական մարմնին է նվիրաբերվել թվով 2 գովազդային վահանակ, որի տեղադրման աշխատանքներտ իրականացվելու են 2022 թվականին, ինչպես նաև նշված պայմանավորվածության համաձայն 2022 թվականին նվիրաբերվելու է անև անօդաչու թռչող սարք:
- Տեսչական մարմնի և Կովկասյան Բնության Հիմնադրամի (ԿԲՀ) հետ համատեղ ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում 2022 թվականին Տեսչական մարմնին նվիրաբերվելու է ընդհանուր 30 000 եվրո գումար արժողությամբ սարքեր և սարքավորումներ: Ձեռք բերված երկարաժամկետ համագործակցության շրջանակներում Տեսչական մարմինը կարող է ստանալ ֆինանսական, տեխնիկական և խորհրդատվական աջակցություն ԿԲՀ-ի կողմից:

1. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով գնահատված միավորները:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշմամբ Տեսչական մարմնի կողմից իրականացվել է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների դասակարգում՝ ըստ ռիսկայնության աստիճանների (բարձր ռիսկայնության՝ 573, միջին ռիսկայնության՝ 1497 և ցածր ռիսկայնության՝ 893):

Հայաստանի Հանրապետությունում առավել ռիսկային ոլորտները և տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև տարեկան գործունեության ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) կազմման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

- ✓ Պետական եկամուտների կոմիտե,
- ✓ Շրջակա միջավայրի նախարարություն և պաշտոնական կայքէջ,
- ✓ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և պաշտոնական կայքէջ,
- ✓ Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացրած հաշվետվությունների կողմից ներկայացված տարեկան վարչական-վիճակագրական հաշվետվություններ,
- ✓ Կադաստրի կոմիտե,
- ✓ Տեսչական մարմնին և նրա «Թեժ գիծ» հեռախոսահամարին ստացված դիմում-բողոքների և ահազանգերի վիճակագրություն:

Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտների քանակը՝ ըստ գերակշռող մաս կազմող տնտեսական գործունեության տեսակների



2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերլուծությունները՝ պայմանավորված առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ՝ այն ուղղությունների, որոնցում ավելի հաճախ են կատարվել իրավախախտումներ: Համաձայն այդ վերլուծությունների առավել ռիսկային են համարվում տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

Տեսչական մարմինը սույն Ծրագիրը կազմելիս տնտեսական գործունեության հետևյալ

- ✓ մետաղական հանքավայրերի շահագործում
- ✓ ոչ մետաղական հանքավայրերի և հանքային ջրերի շահագործում
- ✓ անտառային տնտեսություններ և հատուկ պահպանվող տարածքներ
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ոռոգում և ջրամատակարարում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ արտադրություն
- ✓ շինարարություն

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից 2021 թվականի ընթացքում հրապարակվել է թվով 210 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր, որից 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով՝ 71, ՀՀ վարչապետի հանձնարարականներով՝ 46, ՀՀ պետական այլ մարմիններից ստացված գրությունների հիմքով՝ 59, դիմում-բողոքների հիմքով՝ 14, տրված պարտադիր կատարման հանձնարարականների վերաբերյալ ստուգման հիմքով՝ 15, տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 5:

Իրականացված ստուգումների արդյունքում Տեսչական մարմնի կողմից վեր են հանվել տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական իրավախախտումները, որոնց ընդհանուր քանակը և տոկոսային արտահայտումը ներկայացված է ստորև.

ՀՀ օրենսդրություն	ՀՀ օրենսդրականի իրավախախտումներ /քանակ/	Իրավախախտումները տոկոսային արտահայտմամբ /%/
ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք	70	14.4
ՀՀ ջրային օրենսգիրք	55	11.3
ՀՀ հողային օրենսգիրք	37	7.6
ՀՀ հարկային օրենսգիրք	87	17.9
Թափոնների մասին ՀՀ օրենք	64	13.2
Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք	73	15.0
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	18	3.7
Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք	22	4.5
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	6	1.2
Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք	4	0.8
Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք	6	1.2
Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	7	1.4
Անտառային օրենսգիրք	25	5.1
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	12	2.5
Ընդամենը	**486**	**100**

3. ԱՌԱՎԵԼ ՌԻՍԿԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության ուղղություններ

Տեսչական մարմնի ձևավորումից հետո սույն ոլորտում իրականացված հետևողական վերահսկողության արդյունքներով կայուն բարձր ռիսկային և նախորդ տարիների կտրվածքով երկարաժամկետ բնույթ է կրում համատարած ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ հիմնախնդիրները.

- Տեսչական մարմնի կողմից հավաքագրված վիճակագրական տվյալների համաձայն (*Աղյուսակ 1*) վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված ապօրինի ծառահատումների առավելագույն քանակը բաժին է ընկել 2017 թվականին, որից հետո դիտարկվող ցուցանիշը նվազել է մոտ երկու անգամ: 2021 թվականի 1-ին 9 ամիսների տվյալները վկայում են, որ 2021 թվականին հատված ծառերի քանակի համադրելի է 2018-2020 թվականների նույն ցուցանիշի հետ: Վերոհիշյալ վերլուծությունից պարզ է դառնում, որ 2017 թվականին ապօրինի ծառահատումներ բացառող մոտեցումների որդեգրումից հետո, մասնավորապես՝ տեսչական վերահսկողության ավելացմամբ որոտում արձանագրվել են դրական փոփոխություններ: Միևնույն ժամանակ, 2017 թվականից հետո ապօրինի ծառահատումների բացառման կամ դրանց հարցի նվազման հարցում չի գրանցվել բեկումնային որևէ փոփոխություն:

Հարկ է նշել, որ COVID 19-ի, Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությամբ պայմանավորված, սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների, փայտանյութի բարձր պահանջարկի պատճառով իրականացվող անտառհատումները ևս նպաստել են վերոհիշյալ խնդրի խորացմանը:

Ապօրինի ծառահատումների աշխարհագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հատվող ծառերի քանակի տեսանկյունից առավել խնդրահարույց են ՀՀ Տավուշի և Լոռու մարզերի գրեթե բոլոր անտառածածկ տարածքներում իրավախախտումները, որոնց մասով Տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվում է ավելացնել անտառտնտեսություններում պլանային ստուգումների քանակը (2022 թվականի համար՝ 12, 2021 թվականի 5-ի փոխարեն):

Հարկ է նշել նաև, որ առկա իրավախախտումների բացառման նպատակով Տեսչական մարմնի ու իրավապահ և այլ պետական մարմինների միջև մշտապես իրականացվում է ակտիվ համագործակցություն: Նշված համագործակցության շրջանակներում՝ անշարժ հենակետերում ստուգվում է տեղափոխվող փայտանյութի ձեռքբերման օրինականությունը, իրավապահ և այլ պետական մարմինների կողմից ներկայացված նյութերի առնչությամբ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Տեսչական մարմինը իրականացնում է բնությանը պատճառված վնասի չափի հաշվարկ և այլն:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում վեր են հանվել նաև ոլորտում առկա մի շարք այլ հիմնախնդիրներ: Տեսչական մարմնի կողմից հավաքագրված տվյալների հիման վրա ներկայումս վերլուծվում է անտառտնտեսությունների կողմից հատատեղերի շահագործման, թափուկի դուրսբերման և ցանկացած տիպի փայտանյութի տրամադրման գործընթացները կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն խնդիրը, որը պետք է միտված լինի ապօրինի հատվող ծառերի մասով առկա դրության բարելավմանը: Նշված հարցի կարգավորման առնչությամբ Տեսչական մարմինը նախատեսում է առաջարկություններ ներկայացնել Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ և լիազոր մարմին:

- Կենդանական աշխարհի պահպանության ոլորտում Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում նախորդ տարիների կտրվածքով ևս արձանագրվել են իրավախախտումներ, սակայն հաշվի առնելով որ ստուգումները ՀՀ-ում իրականացվում են բացառապես ստուգաթերթերի միջոցով, ուստի վերջինիս բացակայությունը խոչընդոտել է կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության իրականցմանը: Ներկայումս հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1423-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1041-Ն որոշումը, որով լրացվել է N12 հավելվածը՝ կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում ստուգումներ իրականացնելու ստուգաթերերթը: Տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում պլանավորվել է իրականացնել ստուգում 2 կենդանաբանական այգում:
- Ոլորտային հիմնախնդիրները լուծելու տեսանկյունից որոշ դեպքերում մեծ խոչընդոտ է հանդիսանում Տեսչական մարմնի և պետական այլ մարմինների միջև անհրաժեշտ տեղեկատվության ոչ լիարժեք փոխանակումը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանակետերից և պետական եկամուտների կոմիտեից համապատասխան տեղեկատվության բացակայությունը՝ ներմուծման և արտահանման առնչությամբ, նպաստում է ապօրինի ձեռք բերված բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների վաճառքին և դրանց կանխարգելման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացմանը:

Աղյուսակ 1

Տեղեկատվություն ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ					
Ժամանակահատվածը	*Հատված ծառերի քանակը /հատ/*	*Ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/*	*Տուգանված անձանց թվաքանակը*	*Կիրառված վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)*	*Բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)*
2017 թվական	30,720	692	415	32,361,000	3,394,446,400
2018 թվական	12,821	892	504	44,340,000	1,071,368,140
2019 թվական	16,818	3,186	427	41,330,000	1,451,276,420
2020 թվական	12,978	1,647	324	33,836,000	814,714,440
2021 թվականի 9 ամիս	9,320	1,585	159	16,650,000	344,202,054

Ընդերքօգտագործման և պահպանության ուղղություն

Իրականացված վերահսկողության արդյունքում Տեսչական մարմնի կողմից բացահայտվել են հետևյալ հիմնախնդիրները.

➢ Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող կազմակերպությունները (60% և ավելի) չեն վարում երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրում և այլ փաստագրություններ, որոնք ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության գործընթացում: Վերջինիս հետևանքով ընդերքօգտագործման աշխատանքները չեն իրականացվում օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պայմաններին համապատասխան: Տեսչական մարմնի կողմից իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ պատշաճ երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրման և այլ փաստագրությունների իրականցման դեպքում տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող խախտումները կնվազեն 60-70%-ով: Այդ համատեքստում Տեսչական մարմնի կողմից ներկայումս ուսումնասիրվում է օրենսդրական փոփոխությունների ճանապարհով վերոհիշյալ հարցին տալ լուծում, ինչի վերաբերյալ համապատասխան առաջարկությունները և լուծումները կներկայացվեն Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ և լիազոր մարմին:

➢ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1423-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերը ունեն արդիակացման կարիք, որի վերաբերյալ Տեսչական մարմինը կներկայացնի առաջարկություններ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ:

Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության, օգտագործման և պահպանության ուղղություններ

Իրականացված վերահսկողության արդյունքում Տեսչական մարմնի կողմից բացահայտվել են հետևյալ հիմնախնդիրները.

➢ Տեսչական մարմնի կողմից հավաքագրված տեղեկատվությունը վկայում է, որ տնտեսավարող սուբյեկտների 80-90%-ի մոտ արձանագրվում են խախտումներ՝ կապված մթնոլորտ վնասակար նյութերի (անօրգանական փոշու, ծծմբային անհիդրիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների, ֆորմալդեհիդի, ցիանաջրածնի և այլ վնասակար նյութերի) արտանետումների կոնցենտրացիների հետ՝ թույլտվությունների բացակայությամբ կամ թույլտվություններով սահմանված չափաքանակների արտանետումների գերազանցմամբ: Միջինում մեկ տնտեսավարող սուբյեկտի կտրվածքով արտանետումների քանակները գերազանցում են սահմանված չափաքանակները մինչև 5 և ավել անգամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մթնոլորտային օդի պահպանության ուղղության վերահսկողությունը հիմնականում իրականացվում է այլ ոլորտների ստուգումների հետ զուգընթաց՝ տնտեսական տարբեր ոլորտներում իրենց գործունեությունը ծավալող տնտեսավարող սուբյկետների մոտ (շինարարություն, արտադրություն, հանքարդյունաբերություն, կահույքի արտադրություն, ջրհեռացնող կազմակերպություններ և այլն)՝ 2022 թվականին նախատեսվել է պլանային ստուգումների քանակի ավելացում (2022 թվականի համար՝ 130, 2021 թվականի 100-ի փոխարեն):

➢ Տեսչական մարմնի կողմից 2020-2021 թվականների ընթացքում թափոնի տեղադրում և տեղափոխում իրականացնող կազմակերպություններում կատարված արտածրագրային վերահսկողության արդյունքներով («Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ, «Լև-Խաչ» ՍՊԸ, «Մեխակ Շոլյան» Ա/Ձ, «Ագաթատ Գոլդ» ՍՊԸ) հայտնաբերված իրավախախտումները վերաբերել են արտադրական և սպառման թափոնների չթուլատրված տեղերում տեղադրման, սահմանված կարգին համապատասխան վտանգավոր թափոնների անձնագրերի բացակայության, թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայության, թափոնների գույքագրման, սկզբնական և ընդհանուր հաշվառման գրքերի վարման բացակայության, վտանգավոր թափոննեի վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայության դեպքերին:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում չի գործում թափոնների կառավարման արդյունավետ համակարգ, թափոններով ծածկված տարածքները ընդլայնվում են՝ արդյունքում առկա է ոլորտային բարձր ռիսկ:

Վերոգրյալի հիմքով՝ Տեսչական մարմինը նախատեսում է 2022 թվականին իրականացնել թափոնների կառավարման ոլորտում ծրագրային ստուգումներ թվով 17 կազմակերպություններում:

➢ Հայաստանի Հանրապետությունում շինարարությունը հանդիսանում է տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, սակայն շատ հաճախ շինարարության իրականացման ընթացքում արձանագրվում են շինարարական աղբի ոչ սահմանված վայերում տեղադրման դեպքեր, որը կարող է առաջացնել հողի դեգրադացիա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողերի պահպանության ուղղության վերահսկողությունը հիմնականում իրականացվում են այլ ոլորտների ստուգումների հետ զուգընթաց՝ տնտեսական տարբեր ոլորտներում իրենց գործունեությունը ծավալող տնտեսավարող սուբյկետների մոտ (շինարարություն, հանքարդյունաբերություն, ճանապարհաշինություն)՝ 2022 թվականին նախատեսվել է պլանային ստուգումների քանակի ավելացում (2022 թվականի համար՝ 130, 2021 թվականի 100-ի փոխարեն):

➢ Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել են նաև հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման մասով իրավախախտումներ, որոնց արգելման նպատակով նախատեսվում է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում և մայրուղիներին:

➢ Տեսչական մարմինը ՀՀ վարչապետի 07.12.2020թ Ն 1326-Լ որոշմամբ սահմանված «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի միջոցառումների շրջանակում իրականացնում է լայնածավալ, ներդաշնակ բնապահպանական ուսումնասիրություն (մոնիտորինգ)՝ «Կոպերնիկուս» համակարգի տվյալների ու ծառայությունների կիրառմամբ թվային քարտեզագրում, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն և վերլուծություն, որը ընդգրկում է Սևանա լճի և ջրհավաք ավազանի լճային ափամերձ և ցամաքային տարածքները՝ թիրախավորելով արդյունաբերական, հանգստի, գյուղատնտեսության, ջրային տնտեսության և առևտրի տնտեսական գործունեության ոլորտները: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2022 թվականին, որի արդյունքների ամփոփումից հետո Տեսչական մարմինը հնարավորություն կունենա հնարավորինս ճշգրիտ նույնականացնել Սևանան լճի և դրա ավազանի վրա ազդեցություն ունեցող տնտեսավարողներին, ըստ այդմ ավելի արդյունավետ կպլանավորի ստուգումները:

➢ Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողությամբ արձանագրվել են ՀՀ տարածքում մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնող ՀԷԿ-երի և ՓՀԷԿ-երի ջրօգտագործման արդյունքում գետերի էկոլոգիական թողքերի պահպանման և ձկնապաշտպան կառույցների, սարքավորումների բացակայության դեպքեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականի ընթացքում պլանավորված թվով 9 ՓՀԷԿ-ում արձանագրվել են վերոգրյալ իրավախախտումները, ուստի 2022 թվականի տարեկան

ծրագրում նախատեսվում է ստուգել թվով 12 էլեկտրոէներգիա արտադրող կազմակերպություն:

4. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում թվով 130 տնտեսավարող սուբյեկտներից 91-ն ունեն բարձր ռիսկայնություն, միջին ռիսկայնությամբ՝ 33 և ցածր ռիսկայնությամբ՝ 6, որոնք համաչափ բաժանված են ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային մարզերի և ըստ տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա թողած առավել ռիսկային չափանիշների հավանական բացասական ազդեցության:

Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

1-ին եռամսյակ- 23 ստուգում
2-րդ եռամսյակ- 43 ստուգում
3-րդ եռամսյակ- 39 ստուգում
4-րդ եռամսյակ- 25 ստուգում

Տեսչական մարմնի բազայում հաշվառված է թվով 5022 տնտեսավարող սուբյեկտ, որոնք համարվում են բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողներ:

Ստուգումների տարեկան ծրագիրը կազմվել է Տեսչական մարմնի կողմից ճշտված թվով 2963 տնտեսավարող սուբյեկտների ցանկից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշմամբ հաստատված ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության:

Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վերահսկողական գործառույթներ, որոնց իրագործման առնչությամբ առկա են խնդիրներ՝ կապված աշխատանքների կատարման օպերատիվության, որակի ապահովման, թափանցիկության, արժանահավատության և հաշվետվողականության հետ, իսկ դրանց նվազեցման համար անհրաժեշտ է առավելագույնս պարզեցման, հստակեցման և հասանելիության սկզբունքով ներդնել էլեկտրոնային վերահսկողության համակարգ՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների ապահովմամբ: Էլեկտրոնային վերահսկողության համակարգի ներդրումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում ձևավորել բնապահպանական վերահսկողության իրականացման քաղաքակիրթ նոր մշակույթ և մոտեցում, որը կնպաստի՝

- վերահսկողության թափանցիկության ապահովմանը,
- արժանահավատության և մատչելիության մակարդակի բարձրացմանը,
- տեսուչ-տնտեսավարող փոխհարաբերությունների էական բարելավման,

- բնապահպանական վերահսկողական համակարգի էլեկտրոնային բազայի ձևավորմանը,
- հանրային ռեսուրսների (մարդկային, նյութական և ֆինանսական) արդյունավետ կառավարմանը և այլն:

Տեսչական մարմնի կողմից նախատեսված 2022 թվականի ընթացքում իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված է Հավելված 1-ում:

Տեսչական մարմնի կողմից նախատեսված 2022 թվականի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագիրը՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված է Հավելված 2-ում:

Հավելված 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	**Միջոցառման անվանումը**	**Ակնկալվող արդյունքը**	**Կատարողը**	**Համակատարողը**	**Ժամկետը**
1	2	3	4	5	6
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 23 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Տարածքային ստորաբաժանումներ և ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	I եռամսյակ
		թվով 43 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 39 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 25 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ

2	Տեսչական մարմնի կողմից 2021-2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական և կանխարգելիչ գործողությունների արդյունքներով վիճակագրական հաշվետվությունների կազմում և ներկայացում ՀՀ Վիճակագրական կոմիտե	«Հայտնաբերված վարչական իրավախախտումների, վարչական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակի և նշանակված տուգանքների չափերի մասին» Ձև 1-վի հաշվետվություն:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ	01.03.2022թ.
		«Ամփոփ հաշվետվություն Բնապահպանության և բնական պաշարների արդյունավետ օգտագործման պետական վերահսկողության մասին» Ձև թիվ 1-բնապահպանություն պետական վիճակագրական հաշվետվություն:			20.01.2022թ 20.07.2022թ.
		ՀՀ-ում գործող տնտեսավարող կազմակերպությունների կողմից 2021 թվականի ընթացքում ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների ամփոփ հաշվետվություն:			01.06.2022թ.

3	Տեսչական մարմնի էլեկտրոնային վերահսկողության համակարգի ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի մշակում, վերահսկողության համակարգի ստեղծում՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների ապահովմամբ:	Տեսչական մարմնի 187 աշխատակիցների համար էլեկտրոնային համակարգին հասանելիության ապահովում, վերահսկողական արժանահավատ արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն արտացոլում:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ	15.12.2022թ.
4	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների գործընթացի նախաձեռնում	Տեսչական մարմինների աշխատանքների գրասենյակ համապատասխան առաջարկի ներկայացում:	Ընդերքի վերահսկողության, Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություններ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2022 թվական II եռամսյակ
5	«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների գործընթացի նախաձեռնում	Տեսչական մարմինների աշխատանքների գրասենյակ համապատասխան առաջարկի ներկայացում: Օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է կենդանական աշխարհի զանգվածային ոչնչացման եղանակներով որս	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2022 թվական II եռամսյակ

		իրականացնելու դեպքերի հետևանքով պատճառված վնասի և բնությանը պատճառված վնասի հատուցման ճշգրիտ չափի հաշվարկման հստակեցում:			
6	Հատատեղերի շահագործման, թափուկի դուրսբերման և ցանկացած տիպի փայտանյութի տրամադրման գործընթացները կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխությունների իրականացման գործընթացի նախաձեռնում	Լիազոր մարմին համապասխան գրության ներկայացում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն		2022 թվականի II եռամսյակ
7	ՀՀ վարչապետի 07.12.2020թ Ն 1326-Լ որոշմամբ սահմանված «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի 2022 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացում	Տեսչական մարմնի թվով 7 պետական տեսուչների կարողությունների զարգացում միջազգային լավագույն փորձի շրջանակներում, Սևանա լճի և ջրհավաք ավազանի խնդիրների վերաբերյալ բաց հասանելի տվյալներ պարունակող Պոնտոս էլեկտրոնային համակարգի ստեղծում:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն, Ընդերքի վերահսկողության վարչություն, Երևանի տարածքային բաժին	30.12.2022թ.

8	2021 թվականին Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանի ազգային ագրարային համալսարանների հետ ստորագրված հուշագրերի շրջանակներում համագործակցության ապահովում:	Տեսչական մարմնի թվով 17 պետական տեսուչների ընդերքօգտագործման ոլորտում վերապատրաստում՝ մարկշեյդերական գործի ուսուցում, օգտակար հանածոների գնահատման գործընթացի վերաբերյալ ուսուցում	Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանի ազգային ագրարային համալսարաններ	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն, Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	2022 թվականի II եռամսյակ
		Թվով 15 ուսանողների Տեսչական մարմնում ըստ համապատասխան ոլորտների ուսանողական պրակտիկայի իրականացում	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	2022 թվականի I եռամսյակ և III եռամսյակ
9	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) կողմից անօդաչու թռչող սարքի նվիրաբերության գործընթացի ապահովում	1 հատ երկար թռչող անօդաչու սարքի ձեռքբերում՝ վերահսկողության ընթացքում դժվար հասանելի վայրերի դիտարկման համար (ընդերքօգտագործման ոլորտ, բուսական և կենդանական աշխարհի պահպանության ոլորտ):	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	2022 թվական II եռամսյակ

10	Տեսչական մարմնի և Կովկասյան Բնության Հիմնադրամի (ԿԲՀ) կողմից ընդհանուր 30,000 եվրո գումար արժողությամբ սարքերի և սարքավորումների նվիրաբերության գործընթացի ապահովում	1 հատ երկար թռչող անօդաչու սարքի ձեռքբերում, 2 հատ Վազ 2121 մեքենայի ձեռքբերում, 3 հատ համազգեստին ամրակցվող տեսանկարման սարք՝ կենսաբազմազանության ոլորտում արդյունավետ վերահսկողություն իրականցնելու համար:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	2022 թվական II եռամսյակ
11	Տեսչական մարմնի 20 տեսուչներին ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման հատուկ պատրաստության ուսուցում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում, այդ թվում Տեսչական մարմնի թվով 20 աշխատակիցների կարողությունների զարգացում:	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ		2022 թվականի I եռամսյակ
12	Տեսչական մարմնի տեսուչների վարքագծի կանոնների սահմանում	Տեսչական մարմնի ղեկավարի հրաման	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	2022 թվականի II եռամսյակ

Հավելված 2

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	**Միջոցառման անվանումը**	**Արդյունք**	**Կատարող/համակատարող**	**Ժամկետ**
1	Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ թվով 4 մամուլի ասուլիսների և/կամ հարցազրույցների կազմակերպում և անցկացում:	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացում, թափանցիկության ապահովում: ՁԼՄ-ների, հեռուստաընկերությունների հետ համագործակցություն: Յուրաքանչյուր եռամսյակ 2 միջոցառում:	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:	Առաջին եռամսյակ՝ մինչև մարտի 3-րդ տասնօրյակ: Երրորդ եռամսյակ՝ մինչև սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ:
2	Բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրազեկման աշխատանքների իրականացումն ըստ ոլորտների՝ 1. Մթնոլորտային օդի պահպանություն, ջրային ռեսուրսների, հողերի օգտագործում և պահպանություն, 2. Ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն,	Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում: Հնարավոր խախտումների կանխարգելում, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում: Ըստ ոլորտների՝	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն:	1. Վերջնաժամկետ յուրաքանչյուր եռամսյակի վերջին 3-րդ տասնօրյակ: 2. Վերջնաժամկետ յուրաքանչյուր եռամսյակի վերջին 3-րդ տասնօրյակ: 3. Վերջնաժամկետ յուրաքանչյուր: եռամսյակի վերջին 3-րդ տասնօրյակ:

	3. Կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն, 4. Վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ:	1. Թվով 6 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 4 աշխատանք): 2. Թվով 2 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 1 աշխատանք): 3. Թվով 4 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք): 4. Թվով 3 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք):		4. Վերջնաժամկետ յուրաքանչյուր եռամսյակի վերջին 3-րդ տասնօրյակ
3	Խորհրդատվական և/կամ իրազեկող նյութերի,մամուլի հաղորդագրությունների պատրաստում, տարածում և/կամ հրապարակում:	Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում: Հնարավոր խախտումների կանխարգելում, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում: Ընդհանուր 40 մամուլի հաղորդագրություն և/կամ տեսանյութ:	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ:	Յուրաքանչյուր եռամսյակ 10 հաղորդագրություն և/կամ հրապարակում:
4	Իրազեկում-հանդիպումներ Երևանում և ՀՀ մարզերում՝ տնտեսվարողների, հասարակական կազմակերպությունների,	Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում, իրենց իրավունքների և	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:	Երևան - առաջին եռամսյակ՝ մարտի 2-րդ տասնօրյակ:

	որսորդական միավորումների, բնապահպանների և արշավականների հետ բնապահպանության և ընդերքի ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ:	պարտականությունների մասին իրազեկման ապահովում, հնարավոր խախտումների կանխարգելում: Թվով 11 հանդիպում, յուրաքանչյուր տարածքային բաժնում մեկական:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ:	Արմավիր- երկրորդ եռամսյակ՝ մայիսի 1-ին տասնօրյակ: Արագածոտն, Շիրակ – երկրորդ եռամսյակ՝ հունիսի 3-րդ տասնօրյակ: Արարատ,Վայոց ձոր, Սյունիք - երրորդ եռամսյակ՝ սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ: Կոտայք, Գեղարքունիք Տավուշ, Լոռի - չորրորդ եռամսյակ՝ հոկտեմբերի 1-ին տասնօրյակ:
5	Վարչական վարույթների, դիմում-բողոքների, ահազանգերի, հարցումների վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում:	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում: Թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:	Յուրաքանչյուր կիսամյակի ամփոփումից հետո 1 ամսյա ժամկետում: